4.2.1.	*Պահուստի ձևավորման ծախսեր*		
4.2.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ*		
4.3.	Բոնուսների և զեղչերի պահուստի ձևավորման զուտ ծախսեր		
4.3.1.	*Պահուստի ձևավորման ծախսեր*		
4.3.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ*		
4.4	Պարտավորությունների համապատասխանության թեստի կիրառման արդյունքում ձևավորվող պահուստի ձևավորման ծախսեր		
4.9.	Այլ պահուստների ձևավորման զուտ ծախսեր		
4.9.1.	*Պահուստի ձևավորման ծախսեր*		
4.9.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի ձևավորման գծով եկամուտներ*		
5.	***Տեխնիկական պահուստների հակադարձումից զուտ եկամուտներ***		
5.1.	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի հակադարձումից զուտ եկամուտներ		
5.1.1.	*Պահուստի հակադարձումից եկամուտներ*		
5.1.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր*		
5.2.	Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստի հակադարձումից զուտ եկամուտներ		
5.2.1.	*Պահուստի հակադարձումից եկամուտներ*		
5.2.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր*		
5.3.	Բոնուսների և զեղչերի պահուստի հակադարձումից զուտ եկամուտներ		
5.3.1.	*Պահուստի հակադարձումից եկամուտներ*		
5.3.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր*		

	1	2	3
5.4	Պարտավորությունների համապատասխանության թեստի կիրառման արդյունքում ձևավորվող պահուստի հակադարձումից եկամուտներ		
5.9.	Այլ պահուստների հակադարձումից զուտ եկամուտներ		
5.9.1.	*Պահուստի հակադարձումից եկամուտներ*		
5.9.2.	*Պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի նվազեցման գծով ծախսեր*		
6.	***Այլ ծախսեր ապահովագրության գծով***		
6.1.	Ապահովագրական գործակալներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսեր		
6.1.1.	*Ապահովագրական գործակալներին տրվող միջնորդավճարներ*		
6.1.2.	*Դադարեցված պայմանագրերի գծով հետ ստացվող միջնորդավճարներ*		
6.2.	Վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով միջնորդներին տրվող միջնորդավճարների գծով զուտ ծախսեր		
6.2.1.	*Վերաապահովագրության փոխանցած ռիսկերի գծով միջնորդներին տրվող միջնորդավճարներ*		
6.2.2.	*Դադարեցված պայմանագրերի գծով հետ ստացվող միջնորդավճարներ*		
6.3.	Կարգավորման ծախսեր		
6.4.	Զուտ պարգևավճարներ ապահովագրողներին		
6.4.1.	Վճարվելիք պարգևավճարներ ապահովագրողներին		
6.4.2.	Դադարեցված պայմանագրերի գծով ապահովագրողներին հետ վերադարձվող պարգևավճարներ		
6.5.	Ավանդային բաղադրիչի վերագնահատումից կորուստներ		
6.6.	Իրական արժեքով վերաչափվող պայմանագրերի, նրանցում ներառված ածանցյալ գործիքների վերագնահատումից կորուստներ		
6.9.	Այլ ծախսեր		
6.9.1.	*Ծախսեր ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում*		
7.	***Տոկոսային եկամուտներ***		
7.1.	Տոկոսային եկամուտներ բանկերում ներդրված ընթացիկ ավանդների , բանկերին տրամադրված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով		
7.2.	Տոկոսային եկամուտներ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդների և ոչ ընթացիկ փոխառությունների գծով		
7.3.	Տոկոսային եկամուտներ այլ ընթացիկ ներդրումների գծով		
7.4.	Տոկոսային եկամուտներ այլ ոչ ընթացիկ ներդրումների գծով		
7.5.	Տոկոսային եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված ընթացիկ փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից		
7.6.	Տոկոսային եկամուտներ ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններից		
7.7.	Տոկոսային եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ընթացիկ փոխառություններից և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերից		
7.8.	Տոկոսային եկամուտներ այլ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններից		
7.9.	Տոկոսային եկամուտներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված ընթացիկ փոխառություններից		
7.10.	Տոկոսային եկամուտներ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններից		
7.11.	Տոկոսային եկամուտներ իրավաբանական անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններից		
7.12.	Տոկոսային եկամուտներ իրավաբանական անձանց տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններից		
7.13.	Տոկոսային եկամուտներ այլ անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններից		
7.14.	Տոկոսային եկամուտներ այլ անձանց տրամադրված ոչ ընթացիկ փոխառություններից		
7.15.	Տոկոսային եկամուտներ ընթացիկ արժեթղթերից		
7.15.1.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից*		
7.15.2.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից*		
7.15.3.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից*		
7.15.4.	*Տոկոսային եկամուտներ այլ երկրների պետական արժեթղթերից*		
7.15.5.	*Տոկոսային եկամուտներ այլ երկրների ոչ պետական արժեթղթերից*		
7.15.6.	*Տոկոսային եկամուտներ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերից*		
7.15.7.	*Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերից*		
7.16.	Տոկոսային եկամուտներ ոչ ընթացիկ արժեթղթերից		
7.16.1.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից*		
7.16.2.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից*		
7.16.3.	*Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից*		
7.16.4.	*Տոկոսային եկամուտներ այլ երկրների պետական արժեթղթերից*		
7.16.5.	*Տոկոսային եկամուտներ այլ երկրների ոչ պետական արժեթղթերից*		
7.16.6.	*Տոկոսային եկամուտներ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերից*		
7.17.7.	*Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերից*		
8.	***Տոկոսային ծախսեր***		
8.1.	Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված ընթացիկ վարկերի, փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց		
8.2.	Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված ոչ ընթացիկ վարկերի և փոխառությունների դիմաց		
8.3.	Տոկոսային ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց		
8.4.	Տոկոսային ծախսեր ապահովագրական և վերաապահովագրական ընկերություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.5.	Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց		
8.6.	Տոկոսային ծախսեր այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց		

	1	2	3
8.7.	Տոկոսային ծախսեր ֆիզիկական անձանցից ներգրաված ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.8.	Տոկոսային ծախսեր ֆիզիկական անձանցից ներգրաված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.9.	Տոկոսային ծախսեր իրավաբանական անձանցից ներգրաված ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.10.	Տոկոսային ծախսեր իրավաբանական անձանցից ներգրաված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.11.	Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրաված ընթացիկ փոխառությունների և նրանց հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց		
8.12.	Տոկոսային ծախսեր այլ անձանցից ներգրաված ոչ ընթացիկ փոխառությունների դիմաց		
8.13.	Տոկոսային ծախսեր ապահովագրական ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով		
8.14.	Այլ տոկոսային ծախսեր		
9.	***Ոչ տոկոսային եկամուտներ***		
9.1.	Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից եկամուտներ		
9.1.1.	*Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս*		
9.1.2.	*Ասոցիացված կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ/վնաս*		
9.1.3.	*Դուստր ընկերություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս*		
9.2.	Այլ անձանց նկատմամբ այլ ընթացիկ պահանջներից եկամուտներ		
9.3.	Այլ անձանց նկատմամբ այլ ոչ ընթացիկ պահանջներից եկամուտներ		
9.4.	Ոչ ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) զուտ եկամուտներ		
9.4.1.	*Հիմնական միջոցների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.4.2.	*Ոչ նյութական ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.4.3.	*Ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.4.4.	*Այլ ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.5.	Ընթացիկ ակտիվների օտարումներից (վաճառքներից) զուտ եկամուտներ		
9.5.1.	*Ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.5.2.	*Այլ ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ*		
9.6.	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից և արժեզրկման կորուստի հակադարձումից զուտ եկամուտներ		
9.6.1.	*Հիմնական միջոցների վերագնահատումից զուտ եկամուտներ*		
9.6.2.	*Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից զուտ եկամուտներ*		
9.7.	Ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ եկամուտներ		
9.7.1.	*Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ եկամուտներ*		
9.7.2.	*Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ եկամուտներ*		
9.8.	Արտարժույթի վերագնահատման արդյունքում զուտ եկամուտներ		
9.9.	Կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից զուտ եկամուտներ		
9.9.1.	*Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից զուտ եկամուտներ*		
9.9.2.	*Ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ*		
9.9.3.	*Այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ*		
9.9.4.	*Այլ անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի վերագնահատումից եկամուտներ*		
9.10.	Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների վերագնահատումից զուտ եկամուտներ		
9.11.	Տուգանքների և տույժերի գծով եկամուտներ		
9.12.	Եկամուտներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից		
10.	***Ոչ տոկոսային ծախսեր***		
10.1.	Ծախսեր անձնակազմի գծով		
10.1.1.	*Աշխատակիցներին տրվող աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ*		
10.1.2.	*Պարգևատրումներ և լրավճարներ*		
10.1.3.	*Արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ*		
10.1.4.	*Հատկացումներ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով*		
10.1.5.	*Անձնակազմի ուսուցման (ներառյալ ուսուցման նպատակով գործուղման) ծախսեր*		
10.1.6.	*Այլ գործուղման ծախսեր*		
10.1.9.	*Անձնակազմի գծով այլ ծախսեր*		
10.2.	Այլ կառավարչական ծախսեր		
10.2.1.	*Ընկերության հիմնական միջոցների վարձակալության ծախսեր*		
10.2.2.	*Ընկերության հիմնական միջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր*		
10.2.3.	*Անվտանգության ապահովման ծախսեր*		
10.2.4.	*Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր*		
10.2.5.	*Կապի և հաղորդակցության միջոցների գծով ծախսեր*		
10.2.6.	*Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր*		
10.2.7.	*Բանկային ծառայությունների գծով ծախսեր*		
10.2.8.	*Կազմակերպչական և գրասենյակային ծախսեր*		
10.3.	Հասարակական կապերի գծով ծախսեր		
10.3.1.	*Գովազդի գծով ծախսեր*		
10.3.2.	*Ներկայացուցչական ծախսեր*		
10.3.3.	*Անդամավճարներ*		
10.3.4.	*Այլ ծախսեր*		
10.4.	Հիմնական միջոցների մաշվածության (ամորտիզացիոն) ծախսեր		
10.5.	Ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսեր		
10.6.	Արժեթղթերի թողարկման ծախսեր		
10.7.	Տուգանքների և տույժերի գծով ծախսեր		

	1	2	3
10.8.	Բյուրոյի նկատմամբ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր		
10.8.1.	անդամավճարների ձևավորման գծով ծախսեր		
10.8.2.	պարբերական վճարների ձևավորման գծով ծախսեր		
10.8.3.	լրացուցիչ վճարների ձևավորման գծով ծախսեր		
10.8.4.	միանվագ վճարների ձևավորման գծով ծախսեր		
10.8.5.	այլ կրեդիտորական պարտավորությունների ձևավորման գծով ծախսեր		
10.9.	Կորուստներ այլ համապարփակ եկամտի հակադարձումից		
11	***Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ և դրանց վերադարձ***		
11.01.	Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		
11.02.	Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.03.	Վերաապահովագրության գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		
11.04.	Վերաապահովագրության գծով ակտիվների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.05.	Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		
11.06.	Բանկային և այլ հաշիվների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.07.	Ընթացիկ ներդրումների, տրամադրված փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի գծով հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ		
11.08.	Ընթացիկ ներդրումների, տրամադրված փոխառությունների և կնքված ռեպո համաձայնագրերի գծով պահուստի հակադարձումից եկամուտ		
11.09.	Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ ներդրումների արժեզրկման կորուստների պահուստին հատկացումներ		
11.10.	Մինչև մարման ժամկետը պահվող ընթացիկ ներդրումների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.11.	Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		
11.12.	Դեբիտորական պարտքերի պահուստի հակադարձումից եկամուտ		
11.13.	Այլ ընթացիկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		
11.14.	Այլ ընթացիկ ակտիվների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.15.	Ոչ ընթացիկ ներդրումների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ		
11.16.	Ոչ ընթացիկ ներդրումների և փոխառությունների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.17.	Մինչև մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ ներդրումների արժեզրկման կորուստների պահուստին հատկացումներ		
11.18.	Մինչև մարման ժամկետը պահվող ոչ ընթացիկ ներդրումների պահուստի հակադարձումից եկամուտ		
11.19.	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահանջների արժեզրկման պահուստին հատկացումներ		
11.20.	Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումների և նրանց նկատմամբ պահուստի հակադարձումից եկամուտ		
11.21.	Արտահաշվեկշռային հոդվածների գծով կորուստների գծով ծախսեր		
12.	***Շահույթ մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը***		
13.	***Շահութահարկի գծով ծախս***		
14.	***Շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո***		
15.	***Շահաբաժիններ***		
16.	***Չբաշխված շահույթ***		

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 3
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 31-ի թիվ 80-Ն որոշմամբ

Հավելված 18
«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ԽՈՇՈՐ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(եռամսյակային)

Ապահովագրական ընկերության անվանում _____

Ամսաթիվ _____

(հազար դրամ)

Խոշոր ապահովադիր (ապահովագրված անձ) (կազմակերպության անվանումը, անձնագրային տվյալները)	ՀՎՀՀ/ՀԾՀ	Ռեզիդենտությունը	Ապահովագրության տեսակը	Պայմանագրերի թիվը	Ապահովագրական հատուցումները	Ապահովագրական գումարը	Վճարումների ընդհանուր գումարը	Սպասվող վճարումները
1	2	3	4	5	6	7	8	9

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ՝ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 4
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 31-ի թիվ 80-Ն որոշմամբ

Հավելված 27
«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 27

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Ապահովագրական ընկերության անվանում _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը՝ _____

(հազար դրամ)

N	Արժեթղթի տարեկան ընդհանուր ծավալը	Արժույթի կոդը	Ընդհանուր ընթացիկ գնահատված արժեքը՝ ըստ ֆինանսական գործիքների	Արժեթղթի ընթացիկ գնահատված արժեքը՝ ըստ ISO կոդի	Արժույթի ISO կոդ	Արժեթղթի թողարկող	Արժեթղթի հաշվեկշռային գնահատման մեթոդը	Արժեթղթի վերաորակավորման ենթարկվելու ամսաթիվը	Արժեթղթի կարգավիճակը
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ									
Ընդամենը									
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ									
Ընդամենը									

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ՝ _____
(Գործադիր տնօրեն)

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ _____

«Բարսելոնայի լաբիրինթոսը» և «Մազոնեի լաբիրինթոսը» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին *

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և 40-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2017 թվականի մայիսի 30-ից շրջանառության մեջ դնել «Բարսելոնայի լաբիրինթոսը» և «Մազոնեի լաբիրինթոսը» արծաթե հուշադրամները:
2. Հաստատել «Բարսելոնայի լաբիրինթոսը» և «Մազոնեի լաբիրինթոսը» արծաթե հուշադրամների նկարագրությունները և էսքիզները՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 ապրիլի 2017 թ., N 89-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 89-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «DRAM 5000 ԴՐԱՄ» և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2017»: Փոքր շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»: Հուշադրամի կենտրոնում պատկերված են Բարսելոնայի լաբիրինթոսը և էրոսի արձանը: Շրջագծով «BARCELONA. SPAIN», «ԻՍՊԱՆԻԱ. ԲԱՐՍԵԼՈՆԱ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամի դարձերեսին Բարսելոնայի լաբիրինթոսի գծապատկերն է. ջրավազանը՝ սկզբնամասում և հրապարակը՝ կենտրոնում: Պարագծով «LABYRINTHS OF THE WORLD», «ԱՇԽԱՐՀԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամը պարունակում է լաբիրինթոսի արահետներով գլորվող ոսկեզօծ գնդիկ:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	62,2 գ
Ձևը	անհատական
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 1500 հատ

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. ապրիլի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 4.05.2017 թ. (ՀՀԳՏ N16 (585), 15.05.2017):

«ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՄԱՋՈՆԵԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «DRAM 5000 ԴՐԱՄ» և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2017»: Փոքր շրջագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA«: Հուշադրամի կենտրոնում պատկերված են Մազոնեի լաբիրինթոսը և բրգաձև մատուռը: Շրջագծով «MASONE. ITALY», «ԻՏԱԼԻԱ. ՄԱՋՈՆԵ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամի դարձերեսին Մազոնեի լաբիրինթոսի գծապատկերն է՝ հարթակը կենտրոնում: Շրջագծով «LABYRINTHS OF THE WORLD», «ԱՇԽԱՐՀԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ» մակագրություններն են և ազգային զարդանախշ:

Հուշադրամը պարունակում է լաբիրինթոսի արահետներով գլորվող ոսկեզօծ գնդիկ:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	62,2 գ
Չևը	անհատական
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	մինչև 1500 հատ

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ՄԱՋՈՆԵԻ ԼԱԲԻՐԻՆԹՈՍԸ»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՔԻԶՆԵՐԸ





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 242-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 175-րդ հոդվածի 3-րդ մասը և 176-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին» թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ի 15-րդ կետում «կենսաթոշակային» բառը փոխարինել «ներդրումային» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 մայիսի 2017 թ., N 98-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. ապրիլի 28-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.05.2017 թ. (ՀՀՊՏ N16 (585),[1] 20.05.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով արժեթղթերի հաշվառման համակարգում արժեթղթերով գործարքների վերաբերյալ գրանցումների իրականացման գործընթացը դարձնել ավելի դյուրին և նվազ ծախսատար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 176-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      «3. Թողարկողը սույն կանոնակարգով նախատեսված հանձնարարականները, հարցումները և արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը և տեղեկատվությունը Կենտրոնական դեպոզիտարիային է ներկայացնում այն հաշվի օպերատորի միջոցով (միջնորդությամբ), որի հետ կնքվել է սույն կանոնակարգի 9-րդ գլխով նախատեսված պայմանագիրը, բացառությամբ սույն կանոնակարգի 4.1-րդ և 19.1-րդ կետերով նախատեսված դեպքերի:»,
   2) 4.1-րդ կետում «4-րդ կետով սահմանված պահանջից» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջներից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 մայիսի 2017 թ., N 99-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. ապրիլի 28-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.05.2017 թ. (ՀՀՊՏ N16 (585),[1] 20.05.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու կարգը» կանոնակարգ 10/09-ը հաստատելու մասին» թիվ 156-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայեր ձեռք բերելու կարգը» կանոնակարգ 10/09-ում՝

   1) 8-րդ կետում «տրամադրելու հետ միաժամանակ» բառերը փոխարինել «տրամադրելուց հետո, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը» բառերով,

   2) 8-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. ««Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հրապարակման պահանջը համարվում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կատարված նաև սույն կետով սահմանված կարգով մասնակիցների ռեեստրը վարողին փայերի գների տրամադրման և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ գների հրապարակման դեպքում։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 մայիսի 2017 թ., N 100-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն։*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. ապրիլի 28-ին։
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.05.2017 թ. (ՀՀՊՏ N16 (585),[1] 20.05.2017)։

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով համապատասխանեցնել ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները միջազգային լավագույն փորձին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակը լրացնել 8-րդ տողով հետևյալ բովանդակությամբ.

8. Փայեր ներդրումային ֆոնդերում՝ ընթացիկ (շուկայական) արժեքով, որոնք գրանցված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից, ներդրումային քաղաքականությունն իրականացնում են ՀՀ տարածքում և առկա չէ պայման, որն արգելում է այդ փայերի հետագա օտարումը	5%, բայց ոչ ավել քան 100 մլն դրամը	5%, բայց ոչ ավել քան 100 մլն դրամը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
17 մայիսի 2017 թ., N 106-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.05.2017 թ. (ՀՀԳՏ N18 (587),[1] 01.06.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ վերլուծական և վիճակագրության հավաքագրման գործընթացների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե», «իա» կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» Կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Կանոնակարգ 3/04-ի 64-րդ կետում «36-րդ սյունակում լրացվում են» բառերը փոխարինել «36 - 37-րդ սյունակներում՝ 7-րդ կետում նշված ակտիվները, 38-39-րդ սյունակներում՝ 8-րդ կետում նշված ակտիվները, 40-րդ սյունակում լրացվում են» բառերով,
   2) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 3-ի թիվ 3 հաշվետվության աղյուսակ 18-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
17 մայիսի 2017 թ., N 107-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.05.2017 թ. (ՀՀԳՏ N18 (587),[1] 01.06.2017):

Հավելված
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մայիսի 12-ի թիվ 107-Ն որոշմամբ

«ԱՂՅՈՒՍԱԿ 18. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԲՈԼՈՐ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐՑՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՏԱՐՐԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԸՍՏ ՕՐԵՐԻ

Ապահովագրական ընկերության անվանումը՝ _____

Ամսաթիվ՝ _____

Ամսվա օրեր	Նախորդ ամսվա վերջին ընդհանուր գումարային հիմքերի (պարզեցված մոտեցում)	Սեփական կապիտալի ընդհանուր հիմքերի	Ընդհանուր հիմքերի (ՀՀ դրամ)	Սեփական կապիտալի (ՀՀ դրամ)	Ընդհանուր հիմքերի (ՀՀ դրամ)	Սեփական կապիտալի (ՀՀ դրամ)	Ընդհանուր հիմքերի (ՀՀ դրամ)	Օպերացիոն ռիսկի (գործառնական ռիսկի) հաշվեգրման		Օպերացիոն ռիսկի (գործառնական ռիսկի) հաշվեգրման, ընդհանուր հիմքերի (ՀՀ դրամ) կիրառմամբ		Օպերացիոն ռիսկի (գործառնական ռիսկի) հաշվեգրման ընդհանուր հիմքերի (ՀՀ դրամ) կիրառմամբ		Օպերացիոն ռիսկի (գործառնական ռիսկի) հաշվեգրման սեփական կապիտալի (ՀՀ դրամ) կիրառմամբ		Օպերացիոն ռիսկի (գործառնական ռիսկի) հաշվեգրման սեփական կապիտալի (ՀՀ դրամ) կիրառմամբ	
								(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)	(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)	(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)	(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)	(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)	(մեկ տարեվերջյան)	(բոլոր տարեվերջյանների)
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*
1																			
2																			
3																			
4																			
5																			
6																			
7																			
8																			
9																			
10																			
11																			
12																			
13																			
14																			
15																			
16																			
17																			
18																			
19																			
20																			
21																			
22																			
23																			
24																			
25																			
26																			
27																			
28																			
29																			
30																			
31																			
Ամսվա ընթացքում առավելագույն հարաբերակցություն																			

(հազար դրամ)

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆիզիկական կամ իրավաբանական անձերից ընթացիկ (շուկայական) արժեքով		Բարդույթի հաշվեկշիռը (այդ թվում՝ սեփականատիրոջ) ՀՀ տարածքում գործող բանկերում		Ցպահանջ ավանդները ՀՀ տարածքում գործող բանկերում		Ժամկետային ավանդները ՀՀ տարածքում գործող բանկերում		ՀՀ տարածքում գործող կորպորատիվ փոխառությունները		ՀՀ տարածքում գործող առևտրական ընկերությունների տրամադրված փոխառությունները		ՀՀ տարածքում գործող ընդհանուր նշանակության տրամադրված փոխառությունները		ՀՀ տարածքում գործող կառավարման կազմակերպությունների տրամադրված փոխառությունները		Ռեպո գործառնություններով ձեռք բերված արժեթղթեր		Ներդրումային ֆոնդերի փայեր		Տեխնիկական սխալների ծեծգրում (նվազեցված վերադասակարգման ենթակա չհայտնի պատճառաբերի գծով)
(մեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգել գործող և նոր տեսակի ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով իրականացվող ֆինանսական գործառնությունները, սահմանել այդ սարքերի անվտանգության և շահագործման ու սպասարկման համար պահանջներ, ինչպես նաև ապահովել ծառայությունների մատուցման թափանցիկությունը և դրանց վերաբերյալ հաճախորդների տեղեկացվածությունը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի «բ» և երկրորդ մասի «ե» կետերը, 49-րդ հոդվածը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի օգոստոսի 16-ի ««Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 209-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      ««ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
   2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      «1. Հաստատել «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման, անվտանգության ապահովման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):»,
   3) Որոշմամբ հաստատված Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված Հավելվածի 14-րդ կետի 8-րդ ենթակետի, 21-րդ, 25-րդ և 46-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 մայիսի 2017 թ., N 110-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 31.05.2017 թ. (ՀՀԳՏ N19 (588), 15.06.2017):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մայիսի 16-ի թիվ 110-Ն որոշմամբ

«ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգը սահմանում է ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման և շահագործման կարգը, դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման և հաճախորդների շահերի պաշտպանությանն ուղղված պահանջները, ինչպես նաև ավտոմատ ինքնասպասարկող սարքերի անվտանգության ու հուսալիության հետ կապված կանոնները:

2. Սույն կարգով սահմանված պահանջները չեն տարածվում այն ավտոմատ ինքնասպասարկող սարքերի վրա, որոնց միջոցով հնարավոր չէ իրականացնել սույն կարգի Հավելված 1-ով սահմանված ֆինանսական գործառնությունները:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարք (այսուհետ՝ ՖԳԻԱՍ)՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ինքնասպասարկման էլեկտրոնային ծրագրատեխնիկական սարք, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումը առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի միջամտության, բացառությամբ էլեկտրոնային գանձապահի, որը շահագործվում է միայն ֆինանսական կազմակերպության գանձապահի կողմից,
2) հաճախորդ՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով օգտվում է կամ կարող է օգտվել ֆինանսական կազմակերպության կողմից ՖԳԻԱՍ-ների միջոցով մատուցվող ծառայություններից,
3) հաճախորդի հաշիվ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական կազմակերպության և հաճախորդի միջև համաձայնեցված պայմանների համաձայն բացված բանկային և(կամ) հաշվառման հաշիվ,
4) վճարում՝ ֆինանսական կազմակերպության միջնորդությամբ վճարողի (ՖԳԻԱՍ-ի միջոցով մատուցվող ծառայության համար փոխանցումը նախաձեռնող անձի) կողմից շահառուին (փոխանցվող գումարի վերջնական հասցեատիրոջը) ուղղված վճարում, որի դիմաց վճարողին տրամադրվում է գույք կամ գույքային իրավունք կամ մատուցվում է ծառայություն կամ կատարվում է աշխատանք, կամ վճարում, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե (այդ թվում նաև՝ վճարում էլեկտրոնային փողով),
5) փոխանցում՝ դրամական միջոցների փոխանցում, որի դիմաց փոխանցողին չի տրամադրվում գույք կամ գույքային իրավունք, չի կատարվում աշխատանք, չի մատուցվում ծառայություն (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փողի փոխանցում, էլեկտրոնային փողի մարում բանկային հաշվին փոխանցելու միջոցով),
6) ֆինանսական գործառնություն՝ սույն կարգի Հավելված 1-ով սահմանված գործառնություններ,
7) բանկի գլխամասի (մասնաճյուղի) աշխատանքային ժամեր՝ բանկի գլխամասի և(կամ) մասնաճյուղի գործունեության այն ժամանակահատվածը, երբ վերջինիս տարածքում բանկի աշխատակիցն իրականացնում է հաճախորդների սպասարկում՝ համաձայն բանկի ներքին ընթացակարգերի,

8) ինկասացիա՝ «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ինկասացիոն գործունեություն,
9) ինկասացիոն կազմակերպություն՝ «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կազմակերպություն,
10) լիցքավորում և (կամ) լիցքաթափում՝ ՖԳԻԱՍ դրամական միջոցների մուտքագրումը և (կամ) դրամական միջոցների ելքագրումը,
11) վճարային գործիք՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ՚շանակության,
12) ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպություն՝ ֆինանսական կազմակերպություն, որը սեփականության կամ վարձակալության իրավունքով շահագործում է տվյալ ՖԳԻԱՍ-ը՝ հաճախորդների համար ֆինանսական ծառայությունների մատուցման նպատակով,
13) Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ՝ ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ՚շանակության,
14) Վերաշրջանառության մոդուլ (cash recycling module)՝ տեխնիկածրագրային միջոց, որը կանխիկի ընդունման հնարավորությամբ ՖԳԻԱՍ-ներին թույլ է տալիս վերադարձնել ընդունված կանխիկ Հայաստանի Հանրապետության դրամը՝ սույն կարգով սահմանված պահանջների ապահովման դեպքում,
15) Պահատուփերի անվտանգության համակարգ՝ ՖԳԻԱՍ-ի բնականոն գործունեությանը չարտոնված միջամտումը կանխելու և անվտանգությունը ապահովելու նպատակով սարքավորման մեջ տեղադրված կանխիկ դրամի պահպանման, պահատուփերում հատուկ ներկերի կիրառման միջոց,
16) Ֆինանսական կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից բանկային կամ վճարահաշվարկային գործունեության լիցենզիա ստացած անձինք,
17) Տեսանկարահանման համակարգի ինքնաշխատ (off-line) ռեժիմ՝ տեսանկարահանման ռեժիմ, որը գործարկվում է ՖԳԻԱՍ-ին մոտենալու և (կամ) գործարք իրականացնելու պահից,
18) Տեսանկարահանման համակարգի անընդմեջ (on-line) ռեժիմ՝ առանց ընդհատումների տեսանկարահանման ռեժիմ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. ՖԳԻԱՍ-ները ըստ տեսակի դասակարգվում են հետևյալ խմբերի.
1) էլեկտրոնային գանձապահ (automated teller safe)՝ ավտոմատացված մեքենա, որը նախատեսված է ֆինանսական կազմակերպության տարածքում դրա գանձապահի կողմից շահագործման՝ կանխիկի մուտքագրման ավտոմատացման, իսկ վերաշրջանառության մոդուլի առկայության դեպքում՝ նաև ընդունված դրամի ավտոմատ տրամադրման համար,
2) արժույթի փոխանակման մեքենա (currency exchange machine)՝ ավտոմատացված մեքենա, որն ապահովում է կանխիկ արժույթի փոխարկումը կանխիկ այլ արժույթով կամ խոշոր անվանական արժեքով թղթադրամի փոխանակումը նույն արժույթի ավելի մանր անվանական արժեք ունեցող թղթադրամներով և(կամ) մետաղադրամներով,
3) վճարումների ընդունման տերմինալ (payment terminal)՝ ավտոմատացված մեքենա, որն ապահովում է որոշակի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը և(կամ) հաճախորդների հաշիվների համալրումը կանխիկ դրամով,
4) ավտոմատ գանձման մեքենա (automated teller machine-ATM)՝ ավտոմատացված մեքենա (այսուհետ՝ բանկոմատ), որը կարող է իրականացնել ֆինանսական գործառնություններ՝ օգտագործելով վճարային գործիքներ և(կամ) նույնականացնող այլ միջոցներ: Այս խմբին են դասվում նաև ստացականով կանխիկի տրամադրման սարքերը (scrip cash dispenser), ինչպես նաև կանխիկի տրամադրման սարքերը (cash dispenser), որոնք տրամադրում են կանխիկ Հայաստանի Հանրապետության դրամ՝ վճարային քարտերի կիրառմամբ,
5) բանկային ավտոմատացված մեքենա (automated banking kiosk)՝ ավտոմատացված մեքենա, բացառապես բանկի տարածքում (բանկի գլխամաս (մասնաճյուղ)) տեղադրված բազմաֆունկցիոնալ ինքնասպասարկման սարք, որը կարող է շուրջօրյա իրականացնել կանխիկ և(կամ) անկանխիկ ֆինանսական գործառնություններ, օգտագործելով վճարային գործիքներ և(կամ) նույնականացնող այլ միջոցներ՝ փոխարինելով բանկի դրամարկղային հանգույցը:

5. Բանկի գլխամասի կամ մասնաճյուղի տարածքից դուրս (այդ թվում՝ միջպատային) տեղադրված բանկային ավտոմատացված մեքենան դասակարգվում է որպես բանկոմատ և կարող է իրականացնել միայն բանկոմատի կողմից իրականացվող գործառնությունները: Բանկի գլխամասի կամ մասնաճյուղի տարածքում տեղադրված բանկոմատները չեն կարող դասակարգվել որպես բանկային ավտոմատացված մեքենա և իրականացնել այդ սարքավորման համար սահմանված թույլատրելի գործառնություններ:

6. ՖԳԻԱՍ-ի տեխնիկական սպասարկումը կարող է իրականացվել ֆինանսական կազմակերպության կողմից՝ ինքնուրույն կամ տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագիտացված կազմակերպության աշխատակցի կողմից՝ կողմերի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Տեխնիկական սպասարկման իրականացման ընթացակարգը պետք է սահմանված լինի ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտերով:

7. ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտերով պետք է սահմանված լինեն ՖԳԻԱՍ-ի ամբողջականության, այդ թվում՝ զեղծարարությունների նպատակով տեղադրված սարքավորումների և այլ իրերի հայտնաբերման և տեխնիկական ստուգման ընթացակարգերը□ Ֆինանսական կազմակերպությունը պետք է իրականացնի ՖԳԻԱՍ-ի ամբողջականության և տեխնիկական ստուգում առնվազն երկու ամիսը մեկ անգամ, եթե այդ ժամանակահատվածում ՖԳԻԱՍ-ի լիցքավորման (լիցքաթափման) գործընթաց չի իրականացվել:

8. ՖԳԻԱՍ-ի միջոցով իրականացվող յուրաքանչյուր գործարքի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գործառնությունների մասով կիրառվող սահմանափակումները, այդ թվում՝ ՖԳԻԱՍ-ի տեղադրման, սպասարկման, շահագործման և (կամ) անվտանգության պահանջները սահմանվում են սույն կարգի Հավելված 2-ով և Հավելված 3-ով:

9. Լրացուցիչ ծրագրատեխնիկական մոդուլների տեղադրման արդյունքում ՖԳԻԱՍ-ների միջոցով մատուցվող ծառայությունները կարող են ընդլայնվել կամ արդիականացվել (օրինակ՝ վերաշրջանառության (Cash recycling module) մոդուլ)՝ պահպանելով սույն կարգի պահանջները:

10. ՖԳԻԱՍ-ի միջոցով սույն կարգի Հավելված 1-ում և Հավելված 3-ում չնկարագրված նոր ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար ֆինանսական կազմակերպությունը պետք է դիմի Կենտրոնական բանկ՝ գործառնությունը իրականացնելու համաձայնություն ստանալու նպատակով: Կենտրոնական բանկը մեկամսյա ժամկետում ուսումնասիրում է դիմումը և որոշում կայացնում համաձայնություն տրամադրելու կամ համաձայնություն տրամադրելու մասին դիմումը մերժելու վերաբերյալ: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ նշված ժամկետը կասեցնելու մասին ֆինանսական կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում նոր գործառնություններ իրականացնելու համաձայնությունը համարվում է ստացված:

11. Կենտրոնական բանկը կարող է լրացուցիչ տեղեկատվություն պահանջել ՖԳԻԱՍ-ների և դրանց միջոցով մատուցվող ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև կարող է սահմանափակել ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող գործառնությունները, եթե.

1) չեն ապահովվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները՝ ՖԳԻԱՍ-ների միջոցով կատարված գործարքների նույնականացումը իրականացնելու համար,
2) չեն պահպանվում «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գործարքների նկատմամբ սահմանված պահանջները:

Սույն կարգի Հավելված 3-ով սահմանված ֆինանսական գործառնությունների սահմանաչափերի հետ մեկտեղ, ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպությունը ռիսկային գործառնությունների գծով լրացուցիչ սահմանաչափեր կիրառելու դեպքում պետք է իր ներքին իրավական ակտերով սահմանի այդ գործառնությունների սահմանաչափերի վերաբերյալ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

12. Անվտանգության և հուսալիության կանոնները ուղղված են ՖԳԻԱՍ-ների անխափան աշխատանքին և հնարավոր կորուստների և(կամ) զեղծարարությունների սահմանափակմանը և կանխմանը, գործարքի կատարման ժամանակ հաճախորդների ֆիզիկական անվտանգության, հաճախորդի անձնական տվյալների և ֆինանսական հաղորդագրությունների գաղտնիության և ամբողջականության ապահովմանը, ինչպես նաև սարքավորումը վնասվելուց և կանխիկ դրամական միջոցները հափշտակելուց պաշտպանությանը:

13. Սույն կարգի 14-րդ կետի 1-5-րդ ենթակետերով, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերով սահմանված անվտանգության և հուսալիության կանոնները և Հավելված 2-ի պահանջները տարածվում են նաև «էլեկտրոնային գանձապահ» սարքավորման վրա, եթե վերջինս հագեցած է վերաշրջանառության մոդուլով:

14. Ֆինանսական կազմակերպությունը ՖԳԻԱՍ-ի անվտանգությունը և հուսալիությունը ապահովելու համար՝

1) ձեռնարկում է համապատասխան միջոցներ կեղծ և անվճարունակ թղթադրամների և մետաղադրամների բացահայտման և դրանցով կատարվող գործարքների կասեցման ուղղությամբ,
2) սահմանում է ՖԳԻԱՍ-ների միջոցով կեղծ և անվճարունակ թղթադրամների և մետաղադրամների բացահայտման հետ կապված ընթացակարգեր, միջոցներ է ձեռնարկում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 9) սահմանված կեղծ և անվճարունակ թղթադրամների և մետաղադրամների ընդունման բացառման, ինչպես նաև հնամաշ թղթադրամների և մետաղադրամների բացահայտման և ՖԳԻԱՍ-ի միջոցով վերջիններիս տրամադրման բացառման ուղղությամբ: Վճարունակ, սակայն հնամաշ ճանաչված թղթադրամները և մետաղադրամները կարող են ընդունվել ՖԳԻԱՍ-ների կողմից, սակայն չեն կարող օգտագործվել վերաշրջանառության (cash recycling) մոդուլի կողմից, այսինքն՝ ՖԳԻԱՍ-ը պետք է օժտված լինի հատուկ դրամատուփով, որտեղ պետք է առանձնացվեն հնամաշ թղթադրամները և մետաղադրամները, որով կբացառվի վերջինիս տրամադրումը հաճախորդներին: ՖԳԻԱՍ-ի կողմից ընդունված և հնամաշ դասակարգված թղթադրամները և մետաղադրամները ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպության կողմից պետք է առանձնացվեն և ներկայացվեն Կենտրոնական բանկ՝ համաձայն Կանոնակարգ 9-ի,
3) կանխիկ արտարժույթի ընդունման դեպքում ՖԳԻԱՍ-ը ապահովում է թողարկողի կողմից սահմանված տվյալ արժույթի թղթադրամների և մետաղադրամների վճարունակության և հնամաշության հատկանիշների ստուգումը,
4) ապահովում է իր կողմից շահագործվող ՖԳԻԱՍ-ների միջոցով նոր թղթադրամների (մետաղադրամների) և(կամ) նոր անվանական արժեքներով թղթադրամների (մետաղադրամների) ընդունումը: ՖԳԻԱՍ-ի վրա կամ վերջինիս էկրանին պետք է փակցվի (ներկայացվի) տեղեկատվություն՝ ՖԳԻԱՍ-ի միջոցով սպասարկվող դրամանիշերի անվանական արժեքների վերաբերյալ:
5) ապահովում է անխափան էլեկտրասնուցում, առնվազն ՖԳԻԱՍ-ի միջոցով գործարքն ավարտին հասցնելու նպատակով՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի պահանջների,
6) ապահովում է ՖԳԻԱՍ-ի միջոցով գործարքի կատարման անընդհատությունը՝ պահպանելով սույն կարգի Հավելված 2-ի պահանջները,
7) ապահովում է Պահատուփերի անվտանգության համակարգի առկայությունը իր կողմից տեղադրված ՖԳԻԱՍ-ի համար՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի պահանջների,
8) արդիականացնում է շահագործման մեջ գտնվող ՖԳԻԱՍ-ի ապարատածրագրային համակարգերը՝ համապատասխանեցնելով դրանք ոլորտում առկա անվտանգության և տեխնիկածրագրային նորագույն պահանջներին,
9) իրական ժամանակում ապահովում է իր կողմից տեղադրված ՖԳԻԱՍ-ի մոնիթորինգի իրականացում՝ ուղղված առկա տեխնիկական խնդիրների (օրինակ՝ էլեկտրասնուցման խափանում, ծրագրային և այլ տեխնիկական թերություններ) բացահայտմանը և հնարավորինս կարճ ժամանակահատվածում դրանց վերացմանը,
10) նոր բանկոմատ տեղադրելու որոշում կայացնելու վերաբերյալ նախապես տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

15. ՖԳԻԱՍ-ի կողմից ընդունված կանխիկ դրամը չի կարող կիրառվել այլ կամ տվյալ ՖԳԻԱՍ-ի միջոցով կանխիկ դրամի տրամադրման գործարքներում, մինչև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային բանկի կողմից տվյալ թղթադրամի վճարունակության հատկանիշների համապատասխանության ստուգում անցնելը (կեղծ, անվճարունակ, հնամաշ թղթադրամները և մետաղադրամները հայտնաբերելու նպատակով), բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով սահմանված դեպքի:

16. Կանխիկի ընդունման հնարավորությամբ ՖԳԻԱՍ-ի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության թղթադրամները և մետաղադրամները կարող են վերաշրջանառվել՝ ՖԳԻԱՍ-ում վերաշրջանառության մոդուլի և հետևյալ ստուգումների ապահովման պարագայում՝

1) թղթադրամների վճարունակության հետևյալ նվազագույն պահանջների ստուգում՝
   ա. թղթադրամների տեսանելի պատկերի և չափերի համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,
   բ. ուլտրամանուշակագույն լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,

գ. ինֆրակարմիր լույսի ներքո հայտնաբերվող հատկանիշներ,
դ. մագնիսականություն,

2) մետաղադրամների վճարունակության հետևյալ նվազագույն պահանջների ստուգում՝
ա. մետաղադրամների չափերի (տրամագիծ և հաստություն) համապատասխանությունը Կենտրոնական բանկի կողմից հաստատված նկարագրին,
բ. համաձուլվածքի ստուգում (մագնիսականություն, էլեկտրահաղորդականություն):

17. Կանխիկ դրամի ընդունման հնարավորությամբ ՖԳԻԱՍ-ները պետք է ապահովեն շրջանառության մեջ գտնվող համապատասխան արժույթների թղթադրամների (մետաղադրամների) մասով վճարունակության նվազագույն պահանջների ստուգման մեխանիզմների առկայություն՝ առնվազն սույն կարգի 16-րդ կետի համաձայն:

18. ՖԳԻԱՍ-ի ծրագրային ապահովման նոր տարբերակը և (կամ) ցանկացած թարմացումները պետք է ներդրվեն միայն դրանց հաջող փորձարկումներից հետո: Ծրագրային ապահովման նոր տարբերակը և (կամ) կամայական թարմացումները պետք է փորձարկվեն (թեստավորվեն) Կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 5-ի թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգի» համաձայն:

19. ՖԳԻԱՍ-ի միջոցով վճարային քարտերի սպասարկումը կարող է իրականացվել միայն տվյալ վճարային քարտերի համակարգի կանոններով ՖԳԻԱՍ-ի համար սահմանված համապատասխան պահանջները բավարարելու դեպքում: ՖԳԻԱՍ-ի համար սահմանված համապատասխան պահանջները բավարարելու դեպքում տվյալ քարտային համակարգի պատկերանշանը փակցվում է ՖԳԻԱՍ-ի դիմային հատվածում՝ հաճախորդի համար տեսանելի մասում, որից հետո միայն կարող է կատարվել տվյալ համակարգի քարտերի սպասարկում:

20. Այն դեպքում, երբ հաճախորդը ՖԳԻԱՍ-ով կարող է սպասարկվել նոր տեխնոլոգիաների (առանց շփման տեխնոլոգիա (NFC technology), QR կոդերի ընթերցում, բիոմետրիկ նույնականացում և այլն) կիրառմամբ, ապա ՖԳԻԱՍ-ի դիմային հատվածում՝ հաճախորդի համար տեսանելի մասում, պետք է փակցված լինի համապատասխան տեխնոլոգիայի տարբերանշանը:

21. ՖԳԻԱՍ-ը, բացառությամբ սույն կարգի Հավելված 2-ով սահմանված դեպքերի, պետք է ապահովված լինի ինքնաշխատ կամ անընդմեջ ռեժիմներում աշխատող տեսանկարահանման համակարգով: Տեսախցիկը պետք է տեղադրված լինի այնպես, որ առնվազն տեսանկարահանվի ՖԳԻԱՍ-ին մոտեցած ցանկացած անձ՝ նրա դեմքը և գործողությունները, իսկ գործարք կատարելիս՝ նաև ՖԳԻԱՍ-ից գումարը վերցնելու և ՖԳԻԱՍ գումար մուտքագրելու պահը՝ ապահովելով Հավելված 2-ով սահմանված՝ տեսանկարահանված նյութերի պատշաճ որակ: Տեսախցիկը կարող է տեղադրվել ՖԳԻԱՍ-ի մեջ կամ ՖԳԻԱՍ-ի հարակից պատին, կամ նրանից որոշակի հեռավորության վրա (օրինակ՝ շինության պատի կամ առաստաղի վրա):

22. Տեսանկարահանման համակարգի պահանջը համարվում է ապահովված նաև, եթե ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպությունը ՖԳԻԱՍ-ը տեղադրել է այլ անձին պատկանող կամ վերջինիս կողմից հատկացված տարածքում (այսուհետ՝ Այլ անձի տարածք) և ունի տվյալ անձի հետ կնքված գործող պայմանագիր, համաձայն որի վերջինս պարտավորվել է ապահովել տեսանկարահանումը և ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպության առաջին իսկ պահանջի դեպքում վերջինիս տրամադրել այդ տեսանկարահանումները՝ բավարարելով սույն կարգի 21-րդ կետով սահմանված տեսանկարահանման անհրաժեշտ պահանջները: Տեսանկարահանված նյութերի որակի, պահպանման և հասանելիության համար պատասխանատվությունը կրում է ֆինանսական կազմակերպությունը:

23. Սույն կարգի 21-րդ կետով սահմանված տեսանկարահանումը պետք է իրականացվի այնպես, որ տեսանկարահանված նյութերից հնարավոր չլինի բացահայտել հաճախորդի կողմից մուտքագրվող գաղտնաբառը (ՊԻՆ կոդը):

24. ՖԳԻԱՍ-ի միջոցով բոլոր տեսանկարահանված նյութերի, այդ թվում նաև տեսանկարահանված տեսակադրերի վրա պետք է նշվեն հետևյալ տվյալները.

1) ամսաթիվը (օր, ամիս, տարի),
2) ժամանակը (ժամ, րոպե, ընդ որում, ՖԳԻԱՍ-ի և տեղային ժամանակների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 5 րոպեն),
3) ՖԳԻԱՍ-ի տեղադրման վայրը (հասցեն),
4) ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպության անվանումը կամ ՖԳԻԱՍ-ի նույնականացուցիչ համարը (ոչ պարտադիր Այլ անձի տարածքում կատարված տեսանկարահանումների համար):

25. Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի միջոցով իրականացվում է վճարային քարտերի և քարտի վրա հիմնված էլեկտրոնային փողերի սպասարկում, ապա խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելման նպատակով ՖԳԻԱՍ-ը պետք է հագեցած լինի՝

1) գաղտնաբառի (Պին կոդի) մուտքագրման ստեղնաշարի պաշտպանիչ ծածկույթով (pin pad cover),
2) գործող հակասքիմմինգային սարքավորմամբ (anti skimming device) կամ հակասքիմմինգային ծրագրով:

Տեղադրված սարքավորումները չպետք է խոչընդոտեն հաճախորդի կողմից իրականացվող գործարքին:

26. ՖԳԻԱՍ-ները պետք է ապահովված լինեն շուրջօրյա գործող անվտանգության ահազանգման համակարգով, որը պետք է միացված լինի ոստիկանությանը կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով: Շուրջօրյա գործող անվտանգության ահազանգման համակարգը համարվում է ապահովված, եթե ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպությունը ՖԳԻԱՍ-ը տեղադրել է Այլ անձի տարածքում և վերջինիս հետ կնքված գործող պայմանագրի համաձայն տվյալ անձը պարտավորվել է ապահովել ՖԳԻԱՍ-ի շուրջօրյա անվտանգությունը: Պայմանագրով պետք է սահմանվի, որ ՖԳԻԱՍ-ը Այլ անձի տարածքում տեղադրելու դեպքում տվյալ տարածքի սեփականատեր հանդիսացող կամ այլ օրինական հիմքով տիրապետող անձի անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի ոստիկանությանը կամ արտոնագրված պահակախմբի համակարգին՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

27. Սույն կարգի 26-րդ կետով սահմանված անվտանգության ահազանգման համակարգի առկայության պահանջը չի տարածվում այն ՖԳԻԱՍ-ների վրա, որոնք ապահովագրված են Բանկերս Բլանկետ Բոնդ (Bankers-Blanket-Bond (այսուհետ՝ BBB)) ապահովագրության պայմանագրով, կամ, որը տեղադրված է այնպիսի վայրում, որտեղ Հայաստանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում իրականացվում է պետական պահպանություն, որը համարժեք է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված անվտանգության ահազանգման համակարգի պահանջներին: Ապահովագրությունը պետք է ընդգրկի ֆինանսական կազմակերպության տարածքում և վերջինիս տարածքից դուրս գտնվող ՖԳԻԱՍ-ում առկա գումարի ապահովագրությունն ամբողջությամբ՝ առնվազն հետևյալ ռիսկերի գծով.

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ դրամանիշեր (թղթադրամներ և մետաղադրամներ) և վճարային գործիքներով իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,
2) ֆինանսական կազմակերպության գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպության տարածքում կամ վերջինիս տարածքից դուրս գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

Ընդ որում, «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ
- Մուդիզ՝ «A3» կամ
- Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ
- Ֆիտչ՝ «A-»-ից:

28. Սույն կարգով սահմանված Պահատուփերի անվտանգության համակարգի առկայության պահանջը բավարարելու նպատակով ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպությունը, Պահատուփերի անվտանգության համակարգի շահագործումից առնվազն 10 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկ է ներկայացնում Պահատուփերի անվտանգության համակարգում կիրառվող հատուկ ներկերի մակնիշների, հատուկ պահատուփերի և հատուկ ներկերի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև կիրառվող հատուկ ներկերի նմուշները:

ԳԼՈՒԽ 5. ՖԳԻԱՍ-Ի ԻՆԿԱՍԱՑԻԱ, ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԼԻՑՔԱԹԱՓՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

29. ՖԳԻԱՍ-ի լիցքավորումը և (կամ) լիցքաթափումը, այդ թվում՝ վճարային գործիքների դուրսբերումը, կարող է իրականացվել ֆինանսական կազմակերպության և (կամ) ինկասացիոն կազմակերպության աշխատակիցների (այսուհետ՝ Պատասխանատու աշխատակից) կողմից՝ կողմերի միջև կնքված պայմանագրի հիման վրա□ ՖԳԻԱՍ-ի լիցքավորումը և (կամ) լիցքաթափման, այդ թվում՝ վճարային գոր-

ծիքների դուրսբերման ընթացակարգը պետք է սահմանված լինի ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտերով: Ֆինանսական կազմակերպության կողմից շահագործվող ՖԳԻԱՍ-ի լիցքավորումը և (կամ) լիցքաթափումը, այդ թվում՝ վճարային գործիքների դուրսբերումը, կարող է կատարվել միայն ինկասացիոն կազմակերպության Պատասխանատու աշխատակցի կողմից, եթե շահագործվող ՖԳԻԱՍ-ը ապահովագրված է սույն կարգի 27-րդ կետով սահմանված կարգով□

30. Յուրաքանչյուր լիցքավորման և(կամ) լիցքաթափման գործընթացի ժամանակ Պատասխանատու աշխատակիցների կողմից իրականացվում է ՖԳԻԱՍ-ի ամբողջականության ստուգում՝ կազմելով համապատասխան ստուգման ակտ, այդ թվում՝ զեղծարարությունների նպատակով տեղադրված օտար սարքավորումների և այլ իրերի հայտնաբերման ու դրանց հեռացման նպատակով:

31. Սույն կարգի 29-րդ կետում նշված Պատասխանատու աշխատակիցները պատասխանատվություն են կրում ֆինանսական կազմակերպության կողմից իրենց տրամադրված ՖԳԻԱՍ-ի դռան և վերջինիս դրամապահոցի բացման բանալիների համար: Միևնույն Պատասխանատու աշխատակիցը չի կարող տիրապետել երկու բանալիներին միաժամանակ, բացառությամբ սույն կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ՖԳԻԱՍ-ների: Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի տեխնիկական սպասարկումը իրականացվում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագիտացված կազմակերպության աշխատակցի կողմից, ապա ՖԳԻԱՍ-ի դռան բանալիի համար պատասխանատվությունը կրում է տեխնիկական սպասարկումը իրականացնող մասնագիտացված կազմակերպության աշխատակիցը:

32. ՖԳԻԱՍ-ի դրամապահոցի թվային բանալին պետք է պահվի փակ և կնքված ծրարով՝ ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպության դրամապահոցում և(կամ) չհրկիզվող պահարանում: Թվային բանալին ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպության կողմից պետք է փոփոխվի առնվազն 18 ամիսը մեկ, ինչպես նաև Պատասխանատու աշխատակցի իրավասությունների դադարեցման դեպքում: Թվային բանալին փոփոխելուց հետո այն տրամադրվում է Պատասխանատու աշխատակցին՝ ընդունման-հանձնման ակտ կազմելու միջոցով:

33. ՖԳԻԱՍ-ի լիցքավորման և(կամ) լիցքաթափման համար նախատեսված դրամական միջոցների ինկասացիան պետք է իրականացվի Կանոնակարգ 9-ի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպություններում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» Կանոնակարգ 17/09-ի պահանջների համաձայն:

34. Ֆինանսական կազմակերպությունը բանկոմատների և(կամ) բանկային ավտոմատացված մեքենաների վերալիցքավորման համար պետք է սահմանի նվազագույն մնացորդի և վերալիցքավորման առավելագույն ժամանակահատվածի հաշվարկի կարգ՝ ապահովելով Հավելված 2-ով սահմանված պահանջը: Նվազագույն մնացորդի և վերալիցքավորման առավելագույն ժամանակահատվածի հաշվարկման կարգը պետք է սահմանված լինի ֆինանսական կազմակերպության ներքին իրավական ակտերով:

35. Սույն կարգի 34-րդ կետով սահմանված նվազագույն մնացորդի և վերալիցքավորման առավելագույն ժամանակահատվածի հաշվարկման կարգը սահմանելիս հարկավոր է նաև հաշվի առնել բանկոմատների, բանկային ավտոմատացված մեքենաների միջոցով գումարի կանխիկացման ծավալների վրա ազդող այնպիսի գործոնների առկայությունը, ինչպիսիք են աշխատավարձերի վճարման օրերը, նախատոնական օրերը և այլն: Ֆինանսական կազմակերպության ոչ աշխատանքային օրերին (ժամերին) բանկոմատների և(կամ) բանկային ավտոմատացված մեքենաների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով ֆինանսական կազմակերպությունը պետք է իրականացնի բանկոմատների, բանկային ավտոմատացված մեքենաների մնացորդների մոնիթորինգ՝ ապահովելով բանկոմատների, բանկային ավտոմատացված մեքենաների համար հաշվարկված առավելագույն գումարի չափով լիցքավորումը:

36. Ֆինանսական կազմակերպությունն առնվազն կիսամյակային կտրվածքով պետք է իրականացնի սույն կարգի 34-րդ և 35-րդ կետերում նշված սահմանաչափերի վերանայում և անհրաժեշտության դեպքում իրականացնի դրանց փոփոխում:

37. Ֆինանսական կազմակերպությունը պետք է նախատեսի բանկոմատներից և(կամ) բանկային ավտոմատացված մեքենաներից՝ առկա մնացորդի սահմաններում ցանկացած հազարապատիկ գումարների ելքագրման հնարավորություն՝ ապահովելով անհրաժեշտ տեսակի դրամանիշերի առկայությունը:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

38. Հաճախորդների շահերի պաշտպանությանն ուղղված պահանջները նպաստում են ՖԳԻԱՍ-ների միջոցով ծառայությունների մատուցման թափանցիկության և մատուցվող ծառայության վերաբերյալ իրավաբանական անձ և(կամ) անհատ ձեռնարկատեր հաճախորդների տեղեկացվածության ապահովմանը:

39. Ֆինանսական կազմակերպությունն առանց վճարային գործիքի կիրառման գործարքներում մինչև ՖԳԻԱՍ-ի միջոցով ծառայությունների մատուցումը հաճախորդին ծանոթացնում է ծառայության հիմնական պայմաններին, գանձվող միջնորդավճարների, կիրառվող փոխարժեքների, կիրառվող ժամկետների և տվյալ գործարքի իրականացման համար այլ էական պայմաններին:

40. Ֆինանսական կազմակերպության կողմից ծառայությունը մատուցվում է միայն հաճախորդի հստակ համաձայնությունը կամ կամահայտնությունը ստանալուց հետո (ՖԳԻԱՍ-ի էկրանի վրա ծառայությունը մատուցելու համաձայնության հարցմանը դրական պատասխան պարունակող ստեղնը սեղմելուց հետո):

41. Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ի ապարատածրագրային հնարավորությունները թույլ չեն տալիս կանխիկով վերադարձնել վճարման ենթակա գումարից ավելի մուտքագրված գումարը, ապա ՖԳԻԱՍ-ի վրա, տեսանելի հատվածում, կամ ՖԳԻԱՍ-ի էկրանին ընթեռնելի տառաչափով պետք է փակցված լինի (ներկայացվի) համապատասխան հայտարարություն: ՖԳԻԱՍ-ը շահագործող կազմակերպությունը պետք է ունենա հաճախորդին մանրի վերադարձման նվազագույնը երկու եղանակ (օրինակ՝ մանրի վերադարձման հնարավոր եղանակներ կարող են հանդիսանալ՝ մատուցված ծառայության համար հավելավճարի ընդունումը, բջջային հեռախոսահամարի լիցքավորումը, բանկային (քարտային) հաշիվների և էլեկտրոնային փողերի հաշիվների համալրումը և այլ եղանակներ):

42. ՖԳԻԱՍ-ների վրա փակցվում է շահագործող ֆինանսական կազմակերպության անվանումը և հաճախորդների սպասարկման հեռախոսահամարը (առկայության դեպքում շուրջօրյա սպասարկման հեռախոսահամարը), որի միջոցով հաճախորդը կարող է կապվել ֆինանսական կազմակերպության համապատասխան բաժնի, ծառայության հետ՝ օգնություն կամ խորհրդատվություն ստանալու նպատակով:

43. ՖԳԻԱՍ-ի միջոցով յուրաքանչյուր գործարք կատարելուց հետո հաճախորդին տրամադրվում է գործարքի կատարումը հավաստող անդորրագիր: Անդորրագիրը կարող է չտրամադրվել միայն հաճախորդի՝ անդորրագիր չստանալու վերաբերյալ հստակ համաձայնությունը կամ կամահայտնությունը ստանալու դեպքում: Երբ ՖԳԻԱՍ-ի միջոցով հնարավոր չէ տրամադրել անդորրագիր, նախքան ծառայությունների մատուցումը հաճախորդին պետք է տեղեկացնել անդորրագրի տրամադրելու անհնարինության մասին և վերջինիս՝ անդորրագիր չստանալու (չպահանջելու) վերաբերյալ հստակ համաձայնությունը կամ կամահայտնությունը ստանալու պարագայում միայն շարունակել ծառայության մատուցումը:

44. ՖԳԻԱՍ-ի միջոցով տրամադրվող անդորրագրերն առնվազն պետք է պարունակեն Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոններով» սահմանված վավերապայմանները և ՖԳԻԱՍ-ը նույնականացնող տվյալները (ՖԳԻԱՍ-ի նույնականացուցիչը և(կամ) տեղադրման հասցեն):

45. Այն դեպքում, երբ ՖԳԻԱՍ-ով իրականացված գործարքը հավաստող անդորրագրի վավերապայմանները սահմանված չեն Կենտրոնական բանկի իրավական ակտերով, ապա գործարքի ընթացքում ձևավորված անդորրագիրը առնվազն պետք է պարունակի հետևյալ վավերապայմանները՝

1) հավաստագրումը հավաստող կոդ (առկայության դեպքում),
2) անդորրագրի կազմման ամսաթիվ, ժամ,
3) ՖԳԻԱՍ-ը նույնականացնող տվյալներ (ՖԳԻԱՍ-ի նույնականացուցիչը և(կամ) տեղադրման հասցեն),
4) գործարքի գումար, այդ թվում՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունների դեպքում հաճախորդից ընդունված և հաճախորդին տրամադրված գումար,
5) գործարքի արժույթ, այդ թվում՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունների դեպքում հաճախորդից ընդունված և հաճախորդին տրամադրված գումարի արժույթներ,
6) գործարքի տեսակ,
7) հաշվի վրա դրամական միջոցների մուտքագրման գործարքի դեպքում՝ հաշվի համար կամ վճարային քարտի համար (անվտանգության կանոններով թույլատրելի չափով):

46. Գործարքը հավաստող անդորրագիրը պետք է լինի հայատառ հայերեն, եթե հաճախորդը ցանկություն չի հայտնել անդորրագիրը ստանալ այլ լեզվով և (կամ) հաճախորդը գործարքը կատարելու համար սույն կարգի 47-րդ կետի համաձայն չի ընտրել այլ լեզու:

47. ՖԳԻԱՍ-ը պետք է ունենա առնվազն հայերեն և անգլերեն լեզուներով մենյուներ (երկու լեզուները կարող են ներկայացվել համատեղ կամ նախօրոք ընտրելով դրանցից որևէ մեկը): Այլ լեզուների ընտրության հնարավորության առկայության դեպքում այդ լեզուների ընտրության առաջարկը պետք է լինի տվյալ լեզուներով և ՖԳԻԱՍ-ի միջոցով գործարք իրականացնելու ամբողջ ընթացքում ընտրված լեզուն չպետք է փոփոխվի:

48. ՖԳԻԱՍ-ների միջոցով սպասարկման հասանելիությունը տարեկան պետք է կազմի 97 տոկոս: Այն ՖԳԻԱՍ-ների համար, որոնք տեղադրված են ոչ շուրջօրյա ռեժիմով հասանելի վայրերում, 97 տոկոս հասանելիության հաշվարկը իրականացվում է հաշվի առնելով տվյալ վայրի աշխատանքային ժամանակը:

49. ՖԳԻԱՍ-ը շահագործող ֆինանսական կազմակերպությունը վճարային գործիքի կիրառմամբ գործարք իրականացնելուց առաջ ՖԳԻԱՍ-ի էկրանին կամ ՖԳԻԱՍ-ի դիմային հատվածում՝ հաճախորդի համար տեսանելի մասում, պետք է ներկայացնի ՖԳԻԱՍ-ով գործարքի իրականացման համար իր կողմից կիրառվող միջնորդավճարի վերաբերյալ տեղեկատվություն (առկայության դեպքում):

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշման Հավելվածի

ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող ֆինանսական գործառնություններ

	Արժույթի փոխանակման մեքենա	Վճարումների ընդունման տերմինալ	Ավտոմատ գանձման մեքենա (ԱԳՄ)	Բանկային ավտոմատացված մեքենա
1. Ֆինանսական միջնորդի միջոցով ապրանքների և(կամ) ծառայությունների դիմաց վճարումների ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
2. Համայնքային և պետական բյուջե ուղղված վճարումների ընդունում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
3. Բանկային (ավանդային և ընթացիկ հաշիվներ) և հաշվառման հաշիվների համալրում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
4. Բանկային (ավանդային և ընթացիկ) հաշիվների համալրում արտարժույթով	-	-	-	-
5. Բանկային հաշվից կանխիկացում Հայաստանի Հանրապետության դրամով	-	-	+	+
6. Բանկային հաշվից կանխիկացում արտարժույթով	-	-	-	-
7. Առանց հաշիվների վարկերի մարում Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
8. Առանց հաշիվների վարկերի մարում արտարժույթով	-	-	-	-
9. Վարկի տոկոսագումարի մարում միայն Հայաստանի Հանրապետության դրամով	-	+	+	+
10. Հայաստանի Հանրապետության դրամի մուտքագրմամբ իրականացվող դրամական փոխանցումներ, այդ թվում՝ առանց հաշիվների բացման (Սույն ծառայությունը կարող է մատուցվել այն դեպքում, երբ համապատասխան պրոցեսինգային ընկերությունը (համակարգի օպերատորը) թույլատրում է իրականացնել նմանատիպ գործառնություն:)	-	+	+	+
11. Արտարժույթի մուտքագրմամբ իրականացվող դրամական փոխանցումներ, այդ թվում՝ առանց հաշիվների բացման	-	-	-	-
12. Կանխիկ արտարժույթի փոխարկում կանխիկ Հայաստանի Հանրապետության դրամի	+	-	-	+
13. Կանխիկ Հայաստանի Հանրապետության դրամի փոխարկում կանխիկ արտարժույթի	-	-	-	-
14. Կենտրոնական բանկի կողմից թույլատրված նոր ֆինանսական գործառնություններ	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության	Ըստ համաձայնության

Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշման Հավելվածի

ՖԳԻԱՍ-ների միջոցով իրականացվող գործարքների նկատմամբ պահանջները

		Արժույթի փոխանակման մեքենա	Վճարումների ընդունման տերմինալ	Ավտոմատ գանձման մեքենա (բանկոմատ)	Բանկային ավտոմա-տացված մեքենա	Վերաշրջանառության մոդուլով հագեցված էլեկտրոնային գանձապահ
I	II	III	IV	V	VI	VII
1.	**ՖԳԻԱՍ-ի միջոցով իրականացվող գործարքների վերաբերյալ պահանջներ**					
1)	Յուրաքանչյուր գործարքի համար համապատասխան անդորրագրի տրամադրման ապահովում, բացառությամբ անդորրագիրը տրամադրելու առաջարկը Հաճախորդի կողմից մերժելու դեպքի	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր
2)	Գործառնությունների շուրջօրյա սպասարկման ապահովում 24/7 ռեժիմով՝ պահպանելով ՖԳԻԱՍ-ի միջոցով տարեկան ոչ պակաս, քան 97 տոկոս սպասարկման հասանելիության ապահովման պահանջը□ Միևնույն ֆինանսական կազմակերպության կողմից նույն վայրում տեղադրված երկու և ավելի ՖԳԻԱՍ-ի դեպքում՝ առնվազն մեկի կողմից շուրջօրյա սպասարկման ապահովում 24/7 ռեժիմով	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր
2.	**Անվտանգությունը**					
1)	ՖԳԻԱՍ-ի դռան, այդ թվում նաև դրամապահոցի դռան բացման տվիչի առկայության ապահովում, բացառությամբ, երբ ապահովված են սույն կարգի 27-րդ կետով սահմանված պահանջները	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր
2)	ՖԳԻԱՍ-ի շահագործման համար նախատեսված ուղեկցող սարքավորումների (ցանցային, էլեկտրասնուցման և այլ սարքերի) տեղադրում ՖԳԻԱՍ-ի ներսում կամ այլ՝ կողմնակի անձանցից պաշտպանված հատվածում	պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
3)	ՖԳԻԱՍ-ի էկրանին արտապատկերվող՝ սպառողին նույնականացնող տվյալների (վճարային գործիքի) մուտքագրման, գաղտնիության և անտեսանելիության ապահովում կողմնակի անձանցից	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
4)	Տեսանկարահանման այնպիսի համակարգի առկայության ապահովում, որի միջոցով կնկարահանվի ՖԳԻԱՍ-ին մոտեցած, ինչպես նաև ՖԳԻԱՍ-ի օգնությամբ գործարք իրականացնող անձի դեմքը, կանխիկի մուտքագրման և (կամ) ստացման գործարքը	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
5)	Տեղադրված և նոր տեղադրվող ՖԳԻԱՍ-ում սույն կարգով սահմանված պահատուփերի անվտանգության համակարգի առկայության ապահովում	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր	կիրառելի չէ
6)	Տեսանկարահանված նյութերի պահպանում առնվազն 120 օր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	Կիրառելի չէ
7)	Տեղադրվող սարքավորման տեխնիկական բնութագրիչների համապատասխանեցում տեղադրման վայրին՝ միջպատային և(կամ) դրսում տեղադրված ՖԳԻԱՍ-ի միջոցով գործարքի կատարման անընդհատության ապահովում (օրինակ՝ սարքավորման աշխատանքային ջերմաստիճանային տիրույթը -30 ° …+50C° պայմաններում աշխատունակություն)	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	Կիրառելի չէ
8)	Ինկասացիոն աշխատանքների իրականացման անվտանգության ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
9)	Երեկոյան և գիշերային ժամերին ՖԳԻԱՍ-ից օգտվողների համար սարքի տեղադրման վայրի էլեկտրական լուսավորության և լավ դիտարկելիության ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
3.	**Հուսալիությունը**					
	ՖԳԻԱՍ-ում անխափան էլեկտրասնուցման հնարավորության ապահովում՝ գործարքն ավարտին հասցնելու նպատակով (օրինակ՝ UPS-ների առկայություն, միացում այլընտրանքային սնուցման աղբյուրին և այլն)	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր
	Անվճարունակ, կեղծ և հնամաշ թղթադրամների բացահայտման, չընդունման և հաճախորդին չտրամադրման, ինչպես նաև դրանցով կատարված գործարքների կասեցման, հնարավորության ապահովում	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր	պարտադիր

I	II	III	IV	V	VI	VII
	ՖԳԻԱՍ-ի ինքնաշխատ կամ անընդմեջ ռեժիմներում աշխատող տեսադիտարկման (մոնիթորինգի) համակարգի կենտրոնացված կառավարման ապահովում՝ գլխամասային գրասենյակից կամ մասնաճյուղից	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	պարտադիր	կիրառելի չէ
	ՖԳԻԱՍ-ի դիմային տեսախցիկով տեսածայնագրության ապահովում՝ առնվազն հետևյալ նվազագույն պահանջներին համապատասխան. 1. Տեսածայնագրության հորիզոնական գծայնություն՝ 400 (անալոգային) կամ 480 (թվային) տեսախցիկների պարագայում, 2. Մատրիցա՝ 1/3” 3. Օբյեկտիվ՝ 3.1 մ	ոչ պարտադիր	ոչ պարտադիր	պարտադիր	ոչ պարտադիր	կիրառելի չէ

Հավելված 3
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի օգոստոսի 16-ի
թիվ 209-Ն որոշման Հավելվածի

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գործառնությունների մասով կիրառվող սահմանափակումները

	Գործառնության տեսակը	Կիրառվող սահմանափակումները	Ֆինանսական կազմակերպության նկատմամբ պահանջներ
1.	**Փոխանակում**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով կանխիկ արտարժույթի փոխանակում Հայաստանի Հանրապետության դրամի (կանխիկով)	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող բանկը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով Հայաստանի Հանրապետության դրամի փոխանակում կանխիկ արտարժույթի	արգելված է՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությամբ որդեգրված սկզբունքների համաձայն	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
2.	**Բանկային հաշվից կանխիկ դրամի տրամադրում, այդ թվում՝ վճարային քարտի կիրառմամբ**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով հաշվից Հայաստանի Հանրապետության դրամի տրամադրում	Քարտային հաշիվներից՝ ոչ ավելի, քան 500000 Հայաստանի Հանրապետության դրամ յուրաքանչյուր գործարքի համար, իսկ բանկային ավտոմատացված մեքենայի դեպքում ընթացիկ հաշիվներից կանխիկացման առավելագույն գումարը և քանակը սահմանում է սարքավորումը շահագործող բանկը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Կանխիկացման ծավալի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով հաշվից կանխիկ արտարժույթի տրամադրում	արգելված է՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությամբ որդեգրված սկզբունքների համաձայն	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
3.	**Բանկային հաշվի համալրում կանխիկ դրամական միջոցներով**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով բանկային հաշվի համալրում Հայաստանի Հանրապետության դրամով	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող ֆինանսական կազմակերպությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Ընդունվող կանխիկի ծավալի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	ա. բանկային գործունեության լիցենզիայի առկայություն, կամ բ. վճարահաշվարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով բանկային հաշվի համալրում արտարժույթով	արգելված է՝ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությամբ որդեգրված սկզբունքների համաձայն	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
4.	**Կանխիկ դրամական միջոցներով ապրանքների և/կամ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամով	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող ֆինանսական կազմակերպությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մեկ գործարքի առավելագույն գումարի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	ա. բանկային գործունեության լիցենզիայի առկայություն, կամ բ. վճարահաշվարկային կազմակերպության գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով կանխիկ արտարժույթով	արգելված է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:	
5.	**Վճարային գործիքների կիրառմամբ ապրանքների և/կամ ծառայությունների դիմաց վճարումների կատարում**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով Հայաստանի Հանրապետության դրամով (անկանխիկ)	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող ֆինանսական կազմակերպությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մեկ գործարքի առավելագույն գումարի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով արտարժույթով (անկանխիկ)	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող ֆինանսական կազմակերպությունը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մեկ գործարքի առավելագույն գումարի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն

6.	**Բանկային հաշվից փոխանցում**		
1)	ՖԳԻԱՍ-ի միջոցով Հայաստանի Հանրապետության դրամով (անկանխիկ)	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող բանկը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մեկ գործարքի առավելագույն գումարի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն
2)	ՖԳԻԱՍ-ի միջոցով արտարժույթով (անկանխիկ)	մեկ գործարքի առավելագույն գումարը սահմանում է սարքավորումը շահագործող բանկը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մեկ գործարքի առավելագույն գումարի մասով կարող են կիրառվել լրացուցիչ սահմանափակումներ սարքավորումը շահագործող կամ քարտը թողարկող բանկի կողմից, ինչպես նաև քարտային համակարգի կանոններով կամ բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:	բանկային գործունեության լիցենզիայի առկայություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իա» կետը և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
   1) Կանոնակարգի 2-րդ կետում «26 Հաշվետվություն շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ» բառերը փոխարինել «26 Շահագործման հանձնված ինքնասպասարկող սարքերի վերաբերյալ» բառերով,
   2) Կանոնակարգի 14-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «Թիվ 11 հաշվետվությունում ներկայացվում են Կանոնակարգ 2-ով սահմանված նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն չափի կազմի մեջ մտնող և պակասեցվող տարրերի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:»,
   3) Կանոնակարգի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «29. Թիվ 30 «Շահագործման հանձնված ինքնասպասարկող սարքերի վերաբերյալ» հաշվետվության մեջ լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ տեղադրված և գործող բոլոր ինքնասպասարկող սարքերի վերաբերյալ տեղեկատվությունը: Սույն հաշվետվության մեջ չեն նշվում ՊՈՍ-տերմինալների և իմպրինտերների վերաբերյալ տվյալները: Հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա համար: Ներկայացվող տվյալներում հաշվի են առնվում հաշվետու ամսվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները կապված ինքնասպասարկող սարքերի տեղադրման, տեղափոխման, փոխարինման կամ շահագործման դադարեցման հետ:

   Թիվ 30 «Շահագործման հանձնված ինքնասպասարկող սարքերի վերաբերյալ» հաշվետվությունը բաղկացած է «1. Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող ինքնասպասարկող սարքեր», «2. Երևանի, մարզերի և տարածաշրջանի կոդեր», և «3. Տեղադրման վայրի նկարագրություն» աղյուսակներից:

   «1. Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող ինքնասպասարկող սարքեր» աղյուսակում ընդգրկվում են հաշվետու ամսվա վերջի դրությամբ բանկի կողմից շահագործվող, այդ թվում՝ փոխարինված (արդեն նշված հասցեում շահագործվող ինքնասպասարկող սարքերի փոխարինումը նորով) կամ նոր հասցե տեղափոխված և արդեն նոր տեղադրված՝ շահագործման հանձնված ինքնասպասարկող սարքերի վերաբերյալ տեղեկատվությունը:
   1) «1. Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող ինքնասպասարկող սարքեր» աղյուսակի «ինքնասպասարկող սարքերի շահագործման/գտնվելու վայրի հասցե» սյունակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում տեղադրված և շահագործվող ինքնասպասարկող սարքի գտնվելու վայրի հասցեն: «Ինքնասպասարկող սարքավորման շահագործման գտնվելու վայրի

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 31.05.2017 թ. (ՀՀԳՏ N19 (588), 15.06.2017):

հասցեն» սյունակը բաժանված է երեք ենթասյուների՝ «Երևանի, մարզերի կամ տարածաշրջանի կոդը», «Քաղաք/գյուղ» և «Փողոց», որոնք լրացվում են հետևյալ կերպ.

ա. «Երևանի, մարզերի կամ տարածաշրջանի կոդը» սյունակում լրացվում է սույն հաշվետվության «2. Երևանի, մարզերի և տարածաշրջանի կոդերը» աղյուսակում ներկայացված համապատասխան մարզի, Երևանի (Հայաստանի Հանրապետության մարզերի մարզկենտրոնների, քաղաքային կամ գյուղական համայնքների, Երևանի վարչական շրջանների) կամ տարածաշրջանի համար սահմանված կոդը, որտեղ տեղադրվել է տվյալ ինքնասպասարկող սարքը,

բ. «Քաղաք/գյուղ» սյունակում լրացվում է այն քաղաքի, գյուղի անվանումը, որտեղ տեղադրվել է տվյալ ինքնասպասարկող սարքը,

գ. «Փողոց» սյունակում լրացվում է այն փողոցի անվանումը, տան, շենքի, բնակարանի համարը, որտեղ տեղադրվել է տվյալ ինքնասպասարկող սարքը:

2) «Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող ինքնասպասարկող սարքեր» աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

ա. «Տեղադրման տարածքի նկարագրություն» սյունակը բաժանված է երկու ենթասյուների՝ «Տեղադրման տարածքը» և «Տեղադրման վայրը», որոնք լրացվում են հետևյալ կերպ.

1. «Տեղադրման տարածքը» սյունակում լրացվում է սույն հաշվետվության «3. Տեղադրման վայրի նկարագրություն» աղյուսակում ներկայացված համապատասխան ինքնասպասարկող սարքի տեղադրման վայրի վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ նշված դասակարգման: Օրինակ՝ եթե ինքնասպասարկող սարքը տեղադրվել է որևէ խանութի տարածքում, ապա ընտրվում է «Մեծածախ և մանրածախ առևտուր (սուպերմարկետ, խանութ, շուկա)» դասակարգիչը և այլ:
2. «Տեղադրման վայրը» սյունակում լրացվում է ինքնասպասարկող սարքի տեղադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված հետևյալ դասակարգման՝ «Ներսում», «Դրսում» և «Միջպատային»: Օրինակ՝ եթե ինքնասպասարկող սարքը տեղադրվել է որևէ խանութի տարածքի ներսում, ապա ընտրվում է «Ներսում» դասակարգիչը կամ, եթե ինքնասպասարկող սարքը տեղադրվել է բանկի «Կենտրոն» մասնաճյուղի արտաքին պատին, ապա ընտրվում է «Միջպատային» դասակարգիչը, իսկ եթե ինքնասպասարկող սարքը տեղադրվել է հատուկ պատրաստված կրպակի տարածքում, ապա ընտրվում է «Դրսում» դասակարգիչը,

բ. «Ինքնասպասարկող սարքի արտադրողը, մակնիշը» սյունակում նշվում է տվյալ ինքնասպասարկող սարքի արտադրող կազմակերպության անվանումը և այդ սարքի մակնիշը,

գ. «ինքնասպասարկող սարքի տեսակը՝ ըստ ֆունկցիոնալ խմբավորման» սյունակում լրացվում է ինքնասպասարկող սարքի տեսակի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված հետևյալ դասակարգման՝ «ԷԳ», «ԱԳՄ», «ԱՓՄ», «ՎՏ» և «ԲԱՄ». լրացվում է «ԷԳ», եթե տեղադրված սարքը էլեկտրոնային գանձապահ սարք է, կամ լրացվում է «ԱԳՄ», եթե տեղադրված սարքը ավտոմատ գանձման մեքենա է, կամ լրացվում է «ԱՓՄ», եթե տեղադրված սարքը արժույթի փոխանակման մեքենա է, կամ լրացվում է «ՎՏ», եթե տեղադրված սարքը վճարումների ընդունման տերմինալ է, կամ լրացվում է «ԲԱՄ», եթե տեղադրված սարքը բանկային ավտոմատացված մեքենա է,

դ. «Վերաշրջանառության մոդուլի առկայություն» սյունակում նշվում է «Այո» տողը այն դեպքում, երբ սարքը հագեցած է վերաշրջանառության մոդուլով և «Ոչ» տողը այն դեպքում, երբ սարքը նման մոդուլով հագեցած չէ,

ե. «Արտարժույթի փոխանակման գործառույթի առկայություն» սյունակում նշվում է «Այո» տողը այն դեպքում, երբ սարքի միջոցով կարող է փոխարկվել արտարժույթ և «Ոչ» տողը այն դեպքում, երբ սարքի միջոցով չի կարող փոխարկվել արտարժույթ,

զ. «Շահագործման հանձնման ամսաթիվը (օր/ամիս/տարի)» սյունակում նշվում է տվյալ հասցեում ինքնասպասարկող սարքի շահագործումը սկսելու ամսաթիվը, երբ այն պատրաստ է գործառնություններ իրականացնելու համար,

է. «Որպես սպասարկման կետ ինքնասպասարկող սարքը նույնականացնող կոդը» սյունակում նշվում է կազմակերպության կողմից տեղադրված ինքնասպասարկող սարքը, որպես սպասարկման կետ նույնականացնելու նպատակով տրամադրված կոդը,

ը. «Տեսախցիկների քանակը» սյունակում նշվում է համապատասխան տեղեկատվություն ինքնասպասարկող սարքի տեղադրման տարածքի և գործարքի նկարահանման նպատակով տեղադրված տեսախցիկների քանակի վերաբերյալ՝ թվերով:»,

4) Կանոնակարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում՝ այն դեպքում, երբ քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելուց բացի քարտապանը կարող է իրականացնել գործառնություններ նաև փաստացի տրամադրված վարկի (օվերդրաֆտի) հաշվին, ապա այդ վճարային քարտը ենթակա է դասակարգման որպես «հաշվարկային» քարտ: Այն դեպքում, երբ քարտապանը կարող է վճարային քարտով գործառնություններ իրականացնել միայն վերջինիս պատկանող դրամական միջոցների սահմաններում, և քարտապանին փաստացի չի տրամադրվել վարկ (օվերդրաֆտ), ապա վճարային քարտը ենթակա է դասակարգման որպես «դեբետային» քարտ:»,

5) Կանոնակարգի 30-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում՝ «միանձնյա օգտագործվող» տողը լրացվում է, եթե տվյալ սարքը պատկանում է հաշվետու բանկին՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ սարքը օգտագործվում է համատեղ այլ բանկի հետ, իսկ «համատեղ օգտագործվող» տողը լրացվում է, եթե տվյալ սարքը օգտագործվում է հաշվետու բանկի և այլ բանկի հետ համատեղ և չի պատկանում հաշվետու բանկին:»:

6) Կանոնակարգի Ձև թիվ 11-րդ, Ձև թիվ 30-րդ և Ձև թիվ 31-րդ հաշվետվողական ձևերը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի, Հավելված 2-ի և Հավելված 3-ի (կցվում է),

7) Կանոնակարգի Ձև թիվ 18.2-ում 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Կից ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկը: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք. որ ցանկն ամբողջական չէ, և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

1) African Development Bank
2) Asian Development Bank (ADB)
3) Bank for International Settlements (BIS)
4) Black Sea Trade and Development Bank (BSTDB)
5) Caribbean Development Bank (CDB)
6) Central American Bank for Economic Integration (CABEI)
7) Central Bank of West African States (BCEAO)
8) Corporacion Andina de Fomento (CAF)
9) East African Development Bank (EADB)
10) Eastern Caribbean Central Bank (ECCB)
11) Eurasian Development Bank (EDB)
12) European Bank for Reconstruction and Development (EBRD)
13) European Commission (EC)
14) European Central Bank (ECB)
15) European Investment Bank (EIB)
16) Евразийский банк развития (ЕАБР)
17) Inter-American Development Bank (IDB)
18) International Fund for Agricultural Development (IFAD)
19) International Monetary Fund (IMF)
20) International Organization for Migration (IOM)
21) Islamic Development Bank (IDB)
22) Межгосударственный банк (МБ)
23) Nordic Development Fund (NDF)
24) Nordic Investment Bank (NIB)
25) OPEC Fund for International Development (OPEC Fund)
26) Organization for Economic Co-operation and Development (OECD)
27) Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
28) West African Development Bank (BOAD)
29) World Bank Group
    ա. International Bank for Reconstruction and Development (IBRD)
    բ. International Development Association (IDA)

գ. International Finance Corporation (IFC)
դ. Multilateral Investment Guarantee Agency (MIGA)
ե. International Centre for Settlement of Investment Disputes (ICSID):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ին, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերի, սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով հաստատված Հավելված 1-ի և 7-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 մայիսի 2017 թ., N 111-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մայիսի 16-ի թիվ 111-Ն որոշմամբ

«Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման

Ձև թիվ 11
(ամսական, եռամսյակային, տարեկան)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ

Բանկի անվանումը _____ թ-ից

Ամսաթիվ _____ թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	
Մեծությունը ժամանակաշրջանի վերջում	**x**
Ընդհանուր կապիտալ՝	0
Հիմնական կապիտալ	0
Սովորական բաժնետոմսեր + էմիսիոն եկամուտ - զեղչ	
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	
Գլխավոր պահուստ	
Չբաշխված շահույթ՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Արտոնյալ բաժնետոմսեր՝ Կանոնակարգ 2-ով նախատեսված սահմանաչափով	
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ՝ այդ թվում՝	0
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ	
Սովորական բաժնետոմսեր ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության	
Ոչ նյութական ակտիվներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության	
Նյութական ակտիվներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության	
Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության	
Նյութական ակտիվներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերության	
Բանկի կողմից վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	
Հետաձգված հարկային ակտիվների և հետաձգված հարկային պարտավորությունների դրական տարբերություն	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և Կանոնակարգ 2-ով նախատեսված այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ	
Այլ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժ»պարբերության	
Այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի	
Այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումներ ըստ կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ժբ» պարբերության	
Լրացուցիչ կապիտալ	0
Բանկի գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ ըստ կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ա» ենթակետի	
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	
Արտոնյալ բաժնետոմսեր ըստ կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «գ» ենթակետի	
Բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ ըստ կանոնակարգ 2-ի 28.2-րդ կետի «ե» ենթակետի	
Այլ պահուստներ՝ «բացի Կանոնակարգ 2-ով նախատեսված բացառությունների»	

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ՝ _____

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մայիսի 16-ի թիվ 111-Ն որոշմամբ

«Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման

Ձև թիվ 30
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Շահագործման հանձնված ինքնասպասարկման սարքերի վերաբերյալ

Բանկի անվանումը _____ թ-ից

Ամսաթիվ _____ թ.

1. Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող ինքնասպասարկման սարքավորումներ

Ինքնասպասարկման սարքի շահագործման հասցեն/ գտնվելու վայրը			Տեղադրման տարածքի նկարագրություն		Ինքնասպասարկման սարքի ընդհանուր քանակը	Ինքնասպասարկման սարքի թվային նույնականացման համարը	Վիտակոն գործառույթով սարքերի քանակը	Ընդհանուր վճարահաշվարկի վերլուծության գործառույթով սարքերի քանակը	Շահագործման հանձնման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	Ինքնասպասարկման սարքի տեխնիկական սպասարկման ընկերության անվանումը	Նկատառում
Երևանի, նաև վերի կամ ցածի վերամշակումային	Քաղաք/համայնք	Փողոց	Տեղադրման տարածքը	Տեղադրման տարածքի նկարագրությունը							
				ներսում		ԷԳ	Այո	Այո			
				դրսում		ԱԳՄ	Ոչ	Ոչ			
				միջպատային		ԱՓՄ					
						ՎՏ					
						ԲԱՄ					

Բանկի վարչության նախագահ՝ _____
Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*
Գլխավոր հաշվապահ՝ _____

2. Երևանի, մարզերի և տարածաշրջանի կոդեր

Երևանի, մարզերի և տարածաշրջանի կոդերը	Հայաստանի Հանրապետության մարզերի մարզկենտրոններ, քաղաքային կամ գյուղական համայնքներ, Երևանի վարչական շրջաններ, տարածաշրջան
1.1	Երևանի Աջափնյակ վարչական շրջան
1.2	Երևանի Ավան վարչական շրջան
1.3	Երևանի Արաբկիր վարչական շրջան
1.4	Երևանի Դավթաշեն վարչական շրջան
1.5	Երևանի Էրեբունի վարչական շրջան
1.6	Երևանի Կենտրոն վարչական շրջան
1.7	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան
1.8	Երևանի Նոր Նորք վարչական շրջան
1.9	Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջան
1.11	Երևանի Նուբարաշեն վարչական շրջան
1.12	Երևանի Շենգավիթ վարչական շրջան
1.13	Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան
2.1	Արագածոտնի մարզկենտրոն
2.2	Արագածոտնի մարզի այլ քաղաքներ
2.3	Արագածոտնի մարզի գյուղեր
3.1	Արարատի մարզկենտրոն
3.2	Արարատի մարզի այլ քաղաքներ
3.3	Արարատի մարզի գյուղեր
4.1	Արմավիրի մարզկենտրոն
4.2	Արմավիրի մարզի այլ քաղաքներ
4.3	Արմավիրի մարզի գյուղեր
5.1	Գեղարքունիքի մարզկենտրոն
5.2	Գեղարքունիքի մարզի այլ քաղաքներ
5.3	Գեղարքունիքի մարզի գյուղեր
6.1	Լոռու մարզկենտրոն
6.2	Լոռու մարզի այլ քաղաքներ
6.3	Լոռու մարզի գյուղեր
7.1	Կոտայքի մարզկենտրոն
7.2	Կոտայքի մարզի այլ քաղաքներ
7.3	Կոտայքի մարզի գյուղեր
8.1	Շիրակի մարզկենտրոն
8.2	Շիրակի մարզի այլ քաղաքներ
8.3	Շիրակի մարզի գյուղեր
9.1	Սյունիքի մարզկենտրոն
9.2	Սյունիքի մարզի այլ քաղաքներ
9.3	Սյունիքի մարզի գյուղեր
10.1	Վայոց ձորի մարզկենտրոն
10.2	Վայոց ձոր մարզի այլ քաղաքներ
10.3	Վայոց ձոր մարզի գյուղեր
11.1	Տավուշի մարզկենտրոն
11.2	Տավուշի մարզի այլ քաղաքներ
11.3	Տավուշի մարզի գյուղեր
Այլ կոդեր	Այլ
12.1	Արցախ

3. Տեղադրման վայրի նկարագրություն

Տեղադրման վայրը
Բանկեր (գլխամաս, մասնաճյուղ)
Այլ ֆինանսական և ապահովագրական գործունեություն
Հանքագործական և մշակող արդյունաբերության ձեռնարկություններ.
էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (ՀԷՑ, ՋԷԿ)
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն (կայարաններ, օդանավակայան)
Մեծածախ և մանրածախ առևտուր (սուպերմարկետ, խանութ, շուկա)
Կացության և հանրային սննդի կազմակերպում (հյուրանոց, ռեստորան, սրճարան, բիստրո)
Տեղեկատվություն և կապ (կապի օպերատորներ՝ Վիվա Սել, ԱրմենՏել, հեռուստատեսություն, ռադիոտուն)
Պետական կառավարում և պաշտպանություն (Ազգային ժողով, Կառավարություն, նախարարություններ, այլ պետական հիմնարկներ, սահմանային անցակետեր, մաքսակետեր, զորամասեր)
Քաղաքապետարան, թաղապետարան, գյուղապետարան
Կրթություն (համալսարաններ, դպրոցներ)
Առողջապահություն (հիվանդանոց, ատամնաբուժարան, դեղատուն)
Մշակույթ, զվարճություն, հանգիստ (թատրոն, կինոթատրոն, խաղատուն)
Սպասարկման այլ ծառայություններ (գեղեցկության սրահ, բենզալցակայան, գազալցակայան, կոմունալ ծառայությունների մատուցում, ջրամատակարարում)
Միջազգային կազմակերպություն, դեսպանատուն
Այլ (բնակելի շենք, փողոց)

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մայիսի 16-ի թիվ 111-Ն որոշմամբ

«Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման

Թիվ 31
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Վճարային քարտերի տեսակների, վճարային քարտ սպասարկող սարքերի, ինչպես նաև վճարային քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ»

Կազմակերպության անվանումը _____

Ամսաթիվ _____ *թ.*

1. ՀՀ բանկերի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտեր

Տեղեկատվության պահպանման տեսակ	Քարտապանների տեսակ	Վճարային քարտի վճարման տեսակ/սխեմա	Վճարային համակարգ	Գումար (հազար ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
մագնիսական ժապավենով	ֆիզիկական անձ	դեբետային	Արքա		
հիբրիդ	իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր	հաշվարկային	Վիզա		
միկրոպրոցեսորային		վարկային	Մաստեր քարտ		
միկրոպրոցեսորային (NFC)			Դայներս քլաբ		
վիրտուալ			Ամեքս		
			բանկի ներքին		
			համատեղված		

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Հաշվապահ՝ _____

2. Վճարային քարտի սպասարկման սարքավորումներ/միջոցներ

Սպասարկման սարքի/միջոցի տեղադրման վայր	Սարքի տեսակ	Սարքի/միջոցի օգտագործման ձև	Սարքի/միջոցի օգտագործման երկիր	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*
Բանկեր (գլխամաս, մասնաճյուղ)	ԱԳՄ (ATM)	միանձնյա օգտագործվող	արտասահմանում	
Այլ ֆինանսական և ապահովագրական գործունեություն	ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	համատեղ օգտագործվող	Հայաստանում	
Հանքագործական և մշակող արդյունաբերության ձեռնարկություններ.	վիրտուալ ՊՈՍ (POS)		ԼՂՀ-ում	
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (ՀԷՑ, ՋԷԿ)	Բանկային ավտոմատացված մեքենա (automated banking kiosk)		վիրտուալ միջավայր	
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն (կայարաններ, օդանավակայան)				
Մեծածախ և մանրածախ առևտուր (սուպերմարկետ, խանութ, շուկա)				
Կացության և հանրային սննդի կազմակերպում (հյուրանոց, ռեստորան, սրճարան, բիստրո)				
Տեղեկատվություն և կապ (կապի օպերատորներ՝ ՎիվաՍել, ԱրմենՏել, հեռուստատեսություն, ռադիոտուն)				
Պետական կառավարում և պաշտպանություն (Ազգային ժողով, Կառավարություն, նախարարություններ, այլ պետական հիմնարկներ, սահմանային անցակետեր, մաքսակետեր, զորամասեր)				
Քաղաքապետարան, թաղապետարան, գյուղապետարան				
Կրթություն (համալսարաններ, դպրոցներ)				
Առողջապահություն (հիվանդանոց, ատամնաբուժարան, դեղատուն)				
Մշակույթ, զվարճություն, հանգիստ (թատրոն, կինոթատրոն, խաղատուն)				
Սպասարկման այլ ծառայություններ (գեղեցկության սրահ, բենզալցակայան, գազալցակայան, կոմունալ ծառայությունների մատուցում՝ ջրամատակարարում)				
Միջազգային կազմակերպություն, դեսպանատուն				
Այլ (բնակելի շենք, փողոց,)				

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ՝ _____

3. ՀՀ տարածքում գործող բանկի կողմից թողարկած/տրամադրված վճարային քարտերով կատարված գործառնություններ

Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց	Վճարային քարտի վճարման տեսակ/սխեմա	Գործառնության եղանակ	Գործառնության կատարման երկիր	Ծառայության տեսակ	Վճարային համակարգ	Գումար (հազ. ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*9*
ԱԳՄ (ATM)	հաշվարկային	կանխիկի ելք	արտասահմանում	կոմունալ վճարումներ	Արքա		
ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	դեբետային	կանխիկի մուտք	Հայաստանում	վարկի մարում	Վիզա		
վիրտուալ ՊՈՍ (POS)	վարկային	անկանխիկ մուտք	վիրտուալ միջավայր	պետական բյուջե ուղղված վճարում	Մաստերքարտ		
Բանկային ավտոմատացված մեքենա (automated banking kiosk)		վճարում		ԱՊՊՍ/ ապահովագրություն	Դայներս քլաբ		
բանկի գործառնական օր/հաշվառման համակարգ		փոխանցում		հաշվի ամրագրում/ փոխանցում	Ամեքս		
				քարտից քարտ փոխանցում	բանկի ներքին		
				դրամական համակարգեր	համատեղված		
				ապրանքի, ծառայության դիմաց վճարում			
				կանխիկի ստացում			
				սոցվճարներ			
				աշխատավարձ			
				այլ վճարում			

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ՝ _____

4. Արտասահմանյան բանկերի կողմից թողարկած/տրամադրված վճարային քարտերով ՀՀ տարածքում կատարված գործառնություններ

Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց	Գործառնության եղանակ	Ծառայության տեսակ	Վճարային համակարգ	Գումար (հազ. ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
ԱԳՄ (ATM)	կանխիկի ելք	կոմունալ վճարումներ	Վիզա		
ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	կանխիկի մուտք	վարկի մարում	Մաստերքարտ		
վիրտուալ ՊՈՍ (POS)	վճարում	պետական բյուջե ուղղված վճարում	Դայներս քլաբ		
Բանկային ավտոմատացված մեքենա (automated banking kiosk)	փոխանցում	ԱՊՊԱ/ապահովագրություն	Ամեքս		
		հաշվի ամրագրում/փոխանցում	բանկի ներքին		
		դրամական համակարգեր	համատեղված		
		ապրանքի, ծառայության դիմաց վճարում			
		կանխիկի ստացում			
		այլ վճարում			

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 168-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և 2-րդ մասի «ե» կետը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի ««Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 131-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն, 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն, 2000 թվականի փետրվարի 1-ի թիվ 18 և 2000 թվականի ապրիլի 25-ի թիվ 97 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոններում» (այսուհետ՝ Կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.
   1) Կանոնների 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

      «7. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող դրամական միջոցները մուտքագրելու, ելքագրելու, վճարելու, փոխանցելու, վճարումը (փոխանցումը) չեղյալ համարելու վերաբերյալ կարգադրություն պարունակող վճարահաշվարկային փաստաթղթերի ձևաթերթերը պետք է լինեն առնվազն հայատառ հայերեն, իսկ միջազգային համակարգերի կանոններով և (կամ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված լինելու և (կամ) հաճախորդի ցանկության դեպքում՝ նաև օտար լեզվով՝ պայմանով, որ ֆինանսական կազմակերպությունը հնարավորություն ունի վճարահաշվարկային փաստաթղթերի ձևաթերթերը տրամադրել տվյալ օտար լեզվով: Ֆինանսական կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցումը և (կամ) գործարքների կատարումը հաստատող (հավաստող) և (կամ) մատուցված ծառայությունների և (կամ) կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը պետք է լինեն հայատառ հայերեն, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ և (կամ) հաճախորդը ցանկություն չի հայտնել վճարահաշվարկային փաստաթուղթը ստանալ օտար լեզվով՝ պայմանով, որ ֆինանսական կազմակերպությունը հնարավորություն ունի տրամադրել վճարահաշվարկային փաստաթուղթը տվյալ օտար լեզվով:»,
   2) Կանոնների 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1 կետ.

      «15.1. Սույն կարգի 15-րդ կետով նշված շահառուի բանկային հաշիվը կարող է չկրեդիտագրվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում:»,
   3) Կանոնների 17-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված աղյուսակի 5-րդ սյունակի 13-րդ տողը «պարտադիր» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն կարգի 17-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված դեպքի» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 31.05.2017 թ. (ՀՀՊՏ N19 (588), 15.06.2017):

4) Կանոնների 17-րդ կետի 9-րդ ենթակետում «գումարը» բառից հետո ստորակետ՝ «,» կետադրական նշանը փոխարինել վերջակետ՝ «:» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Այս դաշտը կարող է չլրացվել, եթե փոխանցման կամ վճարման արդյունքում շահառուի բանկային հաշվի կրեդիտագրում չի իրականացվում՝ տվյալ ծառայության համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգի համաձայն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 մայիսի 2017 թ., N 112-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները, մասնավորապես, կանխիկ դրամի պահպանման և փոխադրման պահատուփերում կիրառվող ներկապնակի գործարկման արդյունքում հատուկ ներկով ներկված թղթադրամների հետ իրականացվող գործառնությունները, ինչպես նաև հստակեցնել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության և անվճարունակության չափանիշները,

